ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ IX ԴԱՐԻ ԿԵՍԻՆ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Աբբասյան խալիֆայության տիրապետության ծանր պայմաններում Վասպուրականն նահանգի նախարարները կարողացան պահպանել իրենց ինքնավարությունը։ Ճիշտ է, նրանք ընդունում էին խալիֆայի և նրա դրածոների տերունական իրավունքները, սակայն՝ որոշակի պայմաններում ու շրջանակներում։ Քաղաքական տեսակետից հարավային Հայաստանում IX դարի կեսին դրական գործոն էր Վասպուրականի և Տարոնի նախարարների միջև ստեղծված զինակցությունը, որն է՛լ ավելի էր օրինականացնում երկրի հայազգի իրավատերերի ֆեոդալական իրավունքները։ Մութավաքիլ խալիֆան (847—861), ջանալով կենտրոնացնել իր պետությունը, հալածանքներ սկսեց ծայրամասի բնակիչների դեմ[1], հարուցելով նրանց դժգոհություն։ Այս քաղաքականությունը իր դրսևորումն ստացավ նաև Հայաստանում, նախ և առաջ երկրի հարավային գավառներում, որոնք ավելի մոտ լինելով խալիֆայությանը, ավելի վաղ և ավելի հաճախ էին իրենց վրա կրում դրա հետևանքները։ 849 թ. հարավային Հայաստան ուղարկվեց Աբու Սաիդ (Թովմա Արծրունու մոտ՝ Ապուսեթ) ամիրան, որպես «վերակացու Հայոց և հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի»[2]։ Այս շրջանում նույնպես Հայաստանը մուծում էր արքունի հարկ։ Դրա հավաքումը դրված էր Տարոնի իշխան Բագարատ Բագրատունու (Աշոտ Մսակերի որդու) վրա, որը «ունէր յայնժամ զգլխաւորութիւն բարձակցութիւն իշխանաց Հայոց»[3],—գրում է Թովմա Արծրունին։ Բնականաբար, արքունի հարկը չէր միայն Ապուսեթի գալստյան պատճառը (քանի որ այն առանց այդ էլ, թեև երբեմն ուշացումով, մուծվում էր), այլ հայ իշխաններին ինքնավարությունից զրկելը։ Այդ էր թելադրում Մութավաքիլի ոչ միայն քաղաքական, այլև կրոնական քաղաքականությունը, որի համար հանդուրժելի չէր այլակրոն իշխանների գոյությունը։ Արքունի հարկը լոկ պատրվակ էր։ «Նոքա,— գրում է պատմիչը,— ի մտի եդեալ էին, թերևս պատիր խաբէութեամբ կարասցեն բառնալ զնոսա յիւրաքանչիւր տէրութենէ»[4]։ Սակայն Վասպուրականի և Տարոնի իշխանների՝ միմյանց հետ ունեցած դաշինքը («անլոյծ միաբանութիւն ուիտի») թույլ չտվեց այդ իրականացնել։ Հայ իշխանների միասնությունն ու ուժը հարկադրեցին, որպեսզի Ապուսեթը իր ժամանման պատճառ հայտարարի միայն հարկերն ու հոգաբարձությունը։ Անշուշտ,

---

1 Հմմտ. А. Беляев, Арабы, ислам и Арабский халифат в раннее средневековье, М., 1966, էջ 217։

2 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, II, Ե., էջ 183։

3 Նույն տեղում։

4 Թովմա Արծրունի, II, Ե, էջ 183։

եթե այդ ճշմարիտ լիներ, ապա այն բանից հետո, երբ հայ նախարարները մուծեցին հարկը, խալիֆայի ձեռնարկած հետագա գործողությունները անհրաժեշտ չէին լինի։

Ապուսեթը վերադառնալիս «զվերակացութիւնն աշխարհիս Հայոց և հարկս արքունի» վստահեց Աղձնիքի ամիրա Մուսե իբն Զորահային[5], որը Բագարատ Բագրատունու քրոջ ամուսինն էր ու թեև մոտիկ հարաբերությունների մեջ էր հայ իշխանների հետ, բայց հավակնություն ուներ նրանց հողերի նկատմամբ։ Մուսեին Հայաստանի կառավարիչ նշանակելը նպատակ ուներ մեղմել հայերի դժգոհությունը, իսկ մյուս կողմից խալիֆային ցույց տալ, որ իր հրամանը կատարված է։ Բայց հազիվ էր Ապուսեթը հեռացել Հայաստանից, երբ ճանապարհին հանդիպեց խալիֆայի կողմից Հայաստանին տիրելու լիազորությամբ ուղարկված զորապետ Ալա իբն Ահմադ ալ Սավաֆին (Թովմա Արծրունու մոտ՝ Ալա Սովափի), որին էլ հենց Ապուսեթը հրահանգեց առաջին հերթին ներխուժել Վասպուրական[6]։ Մուսեն, մոտիկից գիտենալով հայ իշխաններին, թերևս հրաժարվել էր վտանգավոր այդ քայլից։ Բացի այդ, ինչպես կտեսնենք ստորև, նա ծրագրեր էր նյութում հատկապես Տարոնի դեմ։ Թովմա Արծրունու նկարագրությունից երևում է, որ Ապուսեթը Հայաստանում խալիֆայության քաղաքականության հիմնական արգելակող ուժն էր համարում Վասպուրականի զորքերը՝ Աշոտ Արծրունու գլխավորությամբ։ Հենց այս նկատառումով էլ նա ամբաստանեց Աշոտին խալիֆայի մոտ, որի համար բողոքագրեր տարավ նաև Վասպուրականի հարևան ամիրաներից, ջանալով ապացուցել խալիֆային, որ Աշոտ Արծրունին «հակառակս ես թագաւորութեան քոյ բանընդդէմ լինի հանապազ»[7]։

Ալա Սովափին ոչ միայն Վասպուրականի, այլև Հայաստանի մյուս մասերի նկատմամբ պետք է իշխանություն իրականացներ, հավաքեր և փոխանցեր «զհարկս և զհասս արքունի»։ Ներխուժելով Աղբակ, նա ասպատակեց Վասպուրականի մյուս գավառները ևս, չխնայելով նաև Անձևացյաց իշխանությանը, որը կախում ունենալով Արծրունիներից՝ հիմնականում վարում էր ինքնուրույն քաղաքականություն։ Չնայած դրան, Անձևացիքից ևս «առնուին աւար ի պատճառս ռոճկաց պիտոյից այրուձիոյն»[8]։ Աշոտ Արծրունին ստիպված էր հրովարտակ ուղարկել Ալա Սովափիին և զարմանք հայտնել, թե ինչու է արքունի հարկի պատճառով երկիրը ենթարկում ավերների, այն դեպքում երբ առանց այդ էլ իրենք չեն թերացել հարկատվության մեջ, երբեք չեն հրաժարվել խալիֆայի իշխանությունից։ Սակայն Ալա Սովափին շարունակեց գործադրել իր իշխանությունը Վասպուրականում, որի նախարարները պայքարի ելան իրենց իրավունքների պաշտպանության համար։ Վասպուրականցիները փայլուն հաղթանակ տարան։ Ալա Սովափին իր զորքի մնացորդներով

---

5 Նույն տեղում, էջ 184։

6 Նույն տեղում, II, Զ, էջ 188—189։ Պատմիչի «ի դառնալն Ապուսէթի յԱսորիս» դարձվածը պետք է ուղղել «ի դառնալն Ապուսէթի յԱրքունիս», քանի որ դեպքերի հետագա ընթացքից պարզվում է, որ Ապուսեթը մեկնել է արքունիք (Սամառա), որը ոչ թե Ասորիքում էր, այլ Իրաքում։

7 Նույն տեղում, II, Ե, էջ 184։

8 «Անձաւացեաց տերութիւն», այսպես է պատմիչը հորջորջում Անձևացիքի իշխանությունը (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ու ն ի, II, Զ, էջ 189)։

փախած Բերկրիի Ուիմանիկների մոտ[9], չհասցնելով ասպատակել Հայաստանի մյուս գավառները։

Ալա Մովսիսի պարտությունից հետո միայն Մուսեն իրեն իրավունք վերապահեց գործադրել Հայաստանի կառավարիչի իրավունքները։ Թովմա Արծրունին գրում է, որ նույն ժամանակ գժտություններ էին առաջացել Բագարատի և Մուսեի միջև, հավանորեն տերիտորիալ բնույթի։ Վերջինս, արքունի հարկը պատրվակ դարձնելով, ներխուժեց Ծարոն, որի իշխան Բագարատը քրոջ ամուսնու դեմ օգնություն խնդրեց մյուս քրոջ որդուց՝ Աշոտ Արծրունուց, հաշվի առնելով ոչ միայն «զմերձաւորութիւն հարազատութեանն», այլև «զկապակցութիւն ուխտին որ ընդ միմեանս երդմամբ հաստատեալ» էին[10]։ Աշոտ Արծրունին «ամենայն նախարարօք Վասպուրականի տերութենեն» շարժվեց օգնելու Բագարատին[11]։ Օգնության են մեկնում Աշոտ, Գուրգեն և Գրիգոր Արծրունիները՝ «զօրօք իւրեանցն», որոնք ներկայացնում էին Վասպուրականի տերունական զորքը։ Բացի այդ, օգնության են գնացել նաև Արծրունիների մյուս 16 ճյուղերի զորամասերը[12], հետևաբար տոհմն այդ ժամանակ ուներ 19 ճյուղավորում։ Բացի այս զորքերից, Արծրունիների շուրջը համախմբված ենք տեսնում նաև Վասպուրականի ուրիշ տոհմերի՝ իրենց զորքերով, հանձինս Բագրատունի Թոռնիկի (մեկ զորամաս), Ամատունիների (ինը զորամաս)՝ Շապուհի գլխավորությամբ, Գնունիների (յոթ զորամաս)՝ Գրիգորի գլխավորությամբ, Ընտրունիների (ութ զորամաս)՝ Արտավազդի գլխավորությամբ։ Բացի այդ, Վասպուրականի զորքը իր շուրջն էր միավորում նաև 14 տոհմերի զորամասեր, որ հանել էին ոչ միայն Վասպուրականի, այլև Տուրուբերանի որոշ նախարարներ։ Այսպիսով, Արծրունիների շուրջն էին համախմբվել հարավային Հայաստանի հետևյալ նախարարությունները.

Բագրատունի (մի ճյուղ)	Գաղրիկյան
Ամատունի	Վահևունի
Գնունի	Ակեացի
Ընտրունի	Գարեղյան[13]
Ապահունի	Մարացյան (Մուրացան)
Քաջբերունի	Անձևացի
Հավնունի	Հարբացի[14]։

Բացի հիշատակածներից, պատմիչը գրում է, որ Արծրունիներին զինակցում էին նաև «այլ բազումք յազատ տանէ իւրաքանչիւր զօրօք[15]։ Զորաջո-

9 Նույն տեղում, էջ 190—191։

10 Նույն տեղում, էջ 185։

11 Նույն տեղում։

12 Նույն տեղում, էջ 185—186։

13 Թովմա Արծրունու մոտ՝ «Գարայեղեն» (էջ 186), որը պետք է լինի Գարեղյան։ Այս նախարարությունը թե՛ Արշակունյաց դահնամակում, և թե՛ այլ աղբյուրներում (Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Եղիշե, «Ներսեսի վարքը», Ուխտանես և այլն) հանդիպում է միայն «Գարեղյան» ձևով, թեև Խորենացին գրում է, որ տոհմի նախնին էր Գարաղը (տե՛ս «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, II, է, էջ 110)։

14 Թովմա Արծրունու բնագրում (էջ 186)՝ «Հարմացիս», որն ուղղելի է Հարբացի (Հարբի նախարարությունը հիշվում է միայն «Ներսեսի վարքում»՝ «Հարբյանք» ձևով, տե՛ս «Սոփերք հայկականք», VI, Վենետիկ, 1853, էջ 34)։

15 Թովմա Արծրունի, II, Զ, էջ 186։

կառնեքը հավանաբար ունեցել են 100—200-ական զինվոր (չհաշված Արծրունիներին)։ Պատմագրի հիշած մի քանի անունների տոհմական պատկանելությունը մնում է չպարզված։ Դրանցից է Թոդորոս Վարազխը։ Թոդորոսը նույն Թեոդորոս անունն է, որը հանդիպում է Վասպուրականի տոհմերից Ռշտունիների և Վահևունիների մոտ։ Սակայն Ռշտունիները, որպես քաղաքական միավոր, վերացել էին ասպարեզից տակավին VIII դարի շեմին։ Ճիշտ է, տոհմի մնացորդները, որ ձուլվեցին Արծրունիներին, կարող էին պահպանել հինավուրց անունները, բայց հազիվ թե պատմագիրը Թեոդորոսին չհիշեր Ռշտունի կամ Վահևունի տոհմանունով, եթե նա իրոք հիշյալ տներից լիներ։ Ավելի հավանական է կարծել, որ եղել է մի բոլորովին այլ տոհմ, որը կրել է «Վարազխ» անունը։ Այս տեսակետից ուշագրավ է, որ «Ներսեսի վարքում» հիշվում է «Վարազք» կամ «Վարազատակք» տոհմը[16] (ընդամենը «Վարազխ» վերագիրը, ավելի ճիշտ՝ «Վարազ», ըստ Հայկազյան բառարանի, ունի «մեծ» իմաստ)։ Վասպուրականից դուրս եղած տոհմերի հիշատակումը ցույց է տալիս, որ Արծրունիներին էին հարել նաև ուրիշ նահանգների իշխաններ։

Արծրունիների ազդեցությունը Ալա Ծովափի դեմ տարած հաղթանակից հետո բնականաբար ավելի մեծացավ։ Ուշագրավ է, որ նրանց վասալների մեջ հիշվում է Բագրատունի իշխան։ Բագրատունիները Վասպուրականում իրավատու էին տակավին VII դարի վերջերից[17]։ Զորեղացած Արծրունիները նրանց դուրս վանեցին նահանգից, բայց տոհմի երկրորդական ճյուղերից մեկը, հավանորեն ընդունելով Արծրունիների գերիշխանությունը, մնաց Վասպուրականում, իսկ մյուսները անցան Տարոն, Մոկք և այլուր։

Շնորհիվ Վասպուրականի և Տարոնի իշխանների միասնության, Մուսեի զորքը ևս պարտություն կրեց։ Սակայն հայերը թույլ տվեցին անուղղելի սխալ, մինչև վերջ չհասցրեցին հաղթանակը, ձեռքից բաց թողնելով Բաղեշին և, որ ավելի կարևոր էր, մոտակայքի Ռահվա լեռնանցքին (Զորա պահակ) տիրանալու հնարավորությունը։ Հայտնի է, որ հետագայում այլևս հնարավոր չեղավ գրավել հիշյալ լեռնանցքը, որը պաշտպանական հույժ կարևոր դեր ուներ Հայաստանի հարավ-արևմտյան սահմանագլխին։

Հակառակ այն բանի, որ վասպուրականցիները օժանդակեցին տարոնցիներին, վերջիններս օգնության չեն հասել թշնամու հարձակմանը ենթարկված Վասպուրականին։ Այս հանգամանքը անշուշտ ուներ իր պատճառները։ Նախ Մուսեն իր զորքով հարմար պահի էր սպասում Տարոն ներխուժելու համար։ Թե՛ Մուսեն և թե՛ Ալա Ծովափին մեկ թշնամի էին դիտվում, որի դեմ վաղ թե ուշ պետք է պատերազմեին թե՛ Տարոնը և թե՛ Վասպուրականը։ Այս է պատճառը, որ վասպուրականցիները օգնության հասան Տարոնին, չնայած որ վերջինս չէր օգնել իրենց։ Չէր օգնել, բայց կաշկանդել էր նույն թշնամու մյուս զորաթևին, որին վերացնելու համար պակաս շահագրգռված չէին վասպուրականցիները։ Այսպիսով, Տարոնի և Վասպուրականի զինակցությունը այս անգամ ևս չխախտվեց։ Հենց այդ զինակցության (և ոչ թե Աշոտ Արծրունու նկատմամբ Բագարատ Բագրատունու, որպես Հայոց իշխանի տերունական իրավունքների) շնորհիվ էր, որ հարավային Հայաստանը առժամանակ գերծ

16 Տե՛ս «Սոփերք հայկականք», VI, էջ 36, 129։

17 Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 18։

մնաց խալիֆայության նոր միջոցառումներից։ Ամուր էր նաև Վասպուրականի ազատանու քաղաքական համախմբումը (բացառությամբ Վասակ Արծրունու, որը գործակցում էր հակառակորդին)[18]։

Թովմա Արծրունու «Պատմությունից» երևում է, որ հայ նախարարները չեն հետևել Հովհաննես Օվայեցի կաթողիկոսի հորդորներին։ Վերջինս, ըստ պատմիչի, «դնէր ուխտս ընդ իշխանս աշխարհիս Հայոց՝ կալ ըստ արժանի հաւատոցն Քրիստոսի», մինչդեռ նախարարները թեև համաձայնությամբ ունկնդրում էին նրան, «սակայն ոչ մեկնեալ լինէին ի ժանդագործ պղծութենէն դազրալից սոդոմական ախտիցն, և ըստ մեղաց տանն Արշակունեաց առաջին թագաւորացն մերոց հետապոտեալ լինէին, գնային ոտնխնթի, դայթ ի դայթս և աղտեղասէրս...»[19]։

Պատմիչը որոշակի չի ասում, թե ինչում էին կայանում նախարարների մեղանչումները, ընդհանուր որակումներից այն կողմ չի անցնում, նշելով, որ կատարում էին «ապիրատ», «վնասակար» գործեր։ Ըստ երևույթին հոգևորականները դեմ են եղել պայքարելու, դիմակայելու ոծին, դրանում տեսնելով իրենց հոտին սպառնացող օրհասը, արհավիրքներ և վերջապես նախարարների հավատուրացությունը, որը, բնականաբար, ներել չի կարող հոգևորական Թովման, որի համար եկեղեցու շահերը վեր են ամեն ինչից, անգամ հարազատ տոհմից։ Ուստի պատմիչը դատափետում է նախարարներին և այն էլ Վասպուրականի ու Տարոնի վերը հիշված հերոսական անցքերից հետո։ Այնուհետև Թովմա Արծրունին գրում է, թե իբր նախարարների վատ վարքագծի պատճառով երկրին հասան «մեծամեծ չարիքս այսոքիկ»[20], ի նկատի ունենալով Յուսուֆի և Բուղայի հետագայում կատարած վայրագությունները։

Ապուսեթի, Ալա Ծովափիի և Մուսեի ձախողանքից հետո Հայաստան ուղարկվեց Յուսուֆը (Ապուսեթի որդին), որը պետք է իրագործեր այն, ինչ չկարողացան իր նախորդները։ Յուսուֆի առջև դրված խնդիրների մասին պարզ պատկերացում է տալիս խալիֆայի կողմից նրան տրված հրահանգը, որը, ըստ Թովմայի, հանգում էր հետևյալին. «Զիշխանս Հայոց կալանօր առ մեզ հասուցանել, մանավանդ զիշխանն Վասպուրական զԱշոտ», փոխարենը Յուսուֆը Հայաստանն ստանում էր «ի ժառանգութիւն»[21]։

Բացառությամբ Բելաձորիի, որը գրում է, թե Մութավաքիլը իր խալիֆայության երկրորդ տարում[22], այսինքն 849 թ. Յուսուֆին ուղարկել է Հայաստան, մյուս արաբ մատենագիրները գրում են, որ այդ արշավանքը տեղի է ունեցել հիջրի 237 թ.[23] (851/52)։ Հայ պատմագիրներից դեպքերին ամենից մոտիկ են կանգնած Թովմա Արծրունին և Հովհաննես Դրասխանակերտցին։ Վերջինս արշավանքի թվականը չի նշում, մինչդեռ Թովմա Արծրունին, որ ժամանակակից է և ականատես, գրում է, որ այն տեղի է ունեցել հայոց 3 (այ-

---

18 Թովմա Արծրունի, II, Ձ, էջ 191։

19 Նույն տեղում, էջ 193։

20 Նույն տեղում, էջ 195։

21 Նույն տեղում, էջ 196։

22 Baladhuri, The origins of the Islamic state. Kitab Futuh al-Buldar. I, New York, 1916, էջ 331։

23 Իբն Միսքավայհ («Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 77), Տաբարի (նույն տեղում, էջ 98), Յակուբի (նույն տեղում, էջ 122), Իբն-ալ-Ասիր (Из Тарих-ал-Камиль Ибн-ал-Асира, Баку, 1940, էջ 67)։

սինքն՝ 851) թվականին[24]։ Կարծում ենք, որ այս թվականն ստույգ է, որովհետև հենց այդ թվականից էր, որ վեցամյա դադարից հետո Փոքր Ասիայի արևելքում վերսկսվեցին ընդհարումները Բյուզանդիայի և խալիֆայության միջև[25]։ Զինաբախումների հիմնական դաշտը լինելու էր Հայաստանը, ուստի անհրաժեշտ էր, որ խալիֆայությունն ամրանար այնտեղ։ Յուսուֆը հենց այդ նկատառումով էր առաջնորդվում։ Հիմնական խոչընդոտը, ըստ Թովմա Արծրունու, համարվում էր Աշոտ Արծրունին։ Խալիֆայությունում կարծիք էր ստեղծվել, թե իբր նա է մեծագույն վնաս հասցրել իրենց։ Այդ, անշուշտ, ուներ իր հիմքերը։ Նախ, ինչպես տեսանք, Բագարատը, շնորհիվ Վասպուրականի զորքի, հաղթանակ շահեց։ Հենց վասպուրականցիների վրա գլխավոր մեղքը բարդելու գիտակցությամբ էր, որ Յուսուֆն առաջին հերթին մտավ Վասպուրական (Ատրպատականից)։ Յուսուֆը,— գրում է պատմիչը «եմուտ ընդ կողմն Ատրպատական յԱղբադ գաւառ յերկիրն Վասպուրական և բանակեցաւ ի յԱդամակերտ ոստանին Արծրունեաց և անդէն սկսաւ աստիատակս սփռել, աւար առնել, կուտել առ ինքն զկապուտ աշխարհին յոյժ սաստկութեամբ»[26]։ Ադամակերտն Արծրունիների ոստանն էր, ուստի թե՛ Ալա Սովափին և թե՛ Յուսուֆը աշխատում էին առաջին հերթին տիրանալ նրան։ Յուսուֆը հույս ուներ, թե Վասպուրականի տերը՝ Աշոտ Արծրունին կամովին կներկայանա իրեն, սակայն նրա սպասելիքները ի դերև ելան։ Վասպուրականցիները կայմ ու պատրաստ անցան Մարդաստան, Հասկո ձոր և սուրհանդակների միջոցով Յուսուֆին հասկացնել տվեցին, որ միայն խաղաղությամբ կարող է իրենց հարկադրել, որպեսզի մուծեն արքունի հարկը։ Ուստի երբ Աշոտի մայրը մեկնեց Յուսուֆի մոտ, հետը տարավ մեծամեծ ընծաներ (ինչը ցույց էր տալու, որ վասպուրականցիները չեն զլանա հարկատվությունից) և հաշտություն խնդրեց որդու և մյուս իշխանների անունից։ Յուսուֆը հարմար գտավ ընդառաջել. նա պատանդներ վերցրեց վասպուրականցիներից և հասկանալով, որ չպետք է առիթ տալ, որպեսզի Վասպուրականի և Տարոնի ուժերը միանան (որի դեպքում անկարելի կլիներ ծնկի բերել հայերին, ինչպես նա գիտեր իր նախորդների փորձից), բարվոք համարեց ընդունել Վասպուրականի իշխանների առաջարկը[27]։ Այդպիսով թվում էր, թե Յուսուֆին հաջողվեց ճեղքել Վասպուրականի և Տարոնի զինակցությունը։

Սակայն երբ Աշոտը իմաստություն ունեցավ չմեկնել Յուսուֆի մոտ, ապա Բագարատ Բագրատունին, անսալով Էլարից Յուսուֆի արած հրավերին, մեկնեց նրա մոտ, որովհետև, գրում է պատմիչը, «ոչինչ ունէր զկարծիս դրժանաց առ թագաւորն և առ զօրս նորա»[28]։ Իհարկե, Յուսուֆի մոտ Բագարատի մեկնելն ունեցել է իր դրդապատճառները։ Նախ, Վասպուրականի նկատմամբ Յուսուֆի վերաբերմունքը Բագարատի և Տարոնի մյուս իշխանների մեջ սերմանել էր այն համոզումը, թե իբր նա հակված է հայերի հետ խաղաղ հարաբերություններ ստեղծելու մտքին։ Բացի այդ, Բագարատը, որպես Հայոց իշխան, պարտավոր էր կատարել «զսպասաս զինուորութեան», այսինքն՝

24 Տե՛ս Թովմա Արծրունի, II, Զ, էջ 195։

25 А. Васильев, Политические отношения Византии и арабов, за время Аморийской династии, С. Петербург, 1900, էջ 161։

26 Տե՛ս Թովմա Արծրունի, II, Զ, էջ 197։

27 Տե՛ս նույն տեղում, էջ 198։

28 Նույն տեղում, էջ 199։

իր զորքով օգնության գնալ խալիֆայությանը, եթե պահանջեին հանգամանքները[29]։ Ըստ Երևույթին որոշակի դեր են կատարել նաև հոգևորականների հորդորները. վերջիններս, իրենց առանձնաշնորհումները պահպանելու մտահոգությամբ, կողմ էին քաղաքական համակերպմանը, երբեմն կատարում էին հաշտարարի դեր։ Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, թե Յուսուֆը «սակս սրբոյ հայրապետին զանիրաւն խորհէր»[30], ինչը հավաստում է, որ Հովհաննես Օձայեցի կաթողիկոսը վատ սպասելիքներ է ունեցել նրանից։ Այդուհանդերձ հոգևորականությունը այս անգամ ևս կողմ էր «չարին չհակառակվելու», տվյալ դեպքում՝ Յուսուֆին հնազանդվելու դիրքորոշմանը։ Դա երևում է այն բանից, որ երբ Բագարատ Բագրատունին մեկնեց Յուսուֆի մոտ, որպեսզի ցույց տա իր հնազանդությունը, ապա նա «բարձեալ եւ ընդ իւր զսուրբ կտակարանս աստուածաշունչ զրոց բազմութեամբ պաշտօնէից քահանայական դասուց»[31]։ Հետևանքն այն եղավ, որ Բագարատն ու «զամենայն ազգատոհմն նորա» դրվեցին երկաթե կապանքների մեջ և տարվեցին Սամառա։

Յուսուֆը Հայաստանի կառավարչի՝ իրեն վերապահված պաշտոնը ապահով և ազդու դարձնելու համար անհրաժեշտ համարեց առաջին հերթին մեջտեղից վերացնել հավակնորդներին՝ Բագրատունիներին, հատկապես նրանց այն նյուղին, որն իշխում էր Տարոնում և Հայաստանի մյուս նախարարների համեմատությամբ ավելի բարձր դահ ուներ։ Հենց այս նկատառումով էր, որ նա ոչ միայն Բագարատին, այլև նրա ամբողջ ազգատոհմին աքսորեց։ Մյուս կողմից Յուսուֆը համոզված էր, որ Բագրատունիները կամովին չեն հրաժարվի Հայաստանում ունեցած իրենց իրավունքներից, ուստի նա Բագարատի մոտ ուղարկած դեսպանների հետ թուղթ առաքեց, դրելով, որ իբր կամենում է «ի ձեռն նորա (Բագարատի—Վ. Վ.) հաստատել աշխարհիս Հայաստանեայց»[32]։

Թովմա Արծրունին գրում է, որ «ազդ լինէր իշխանին (Աշոտ Արծրունուն—Վ. Վ.) ի նոյն գնդէն տաճկաց՝ մի տեսանել զերեսս նորա (Յուսուֆի—Վ. Վ.) ծանուցանելով նմա՝ զոր ինչ խորհեալ էր վասն նորա»[33]։ Արաբ մատենագիրները (Բելաձորի, Իբն Միսքավայհ, Տաբարի, Յակուբի և ուրիշներ) շեշտում են Բագարատի հանդեպ Յուսուֆի ուխտադրուժ վերաբերմունքը[34]։ Ընդսմին Տաբարին գրում է, որ երբ Յուսուֆը ձերբակալեց Բագարատին, ապստամբ հայերին միացավ նաև Մուսե իբն Զորահան[35], որին հայերից կրած պարտությունը համոզիչ դասեր էր տվել, բայց նշանակություն է ունեցել նաև Յուսուֆի խարդախ ու վտանգավոր (որը կարող էր սպառնալ իրեն համագործակցողներին) խաղը Բագարատի հանդեպ, որի փեսան էր Մուսեն։ Սա-

29 Նույն տեղում։ Չնայած այս հանգամանքին, հետագայում գերված հայ նախարարներին խալիֆայի ներկայացրած մեղադրանքների մեջ նշվում էր և այն, որ հայերը այրուձի են կազմել, որը համարվում էր ապստամբություն խալիֆայության դեմ (տե՛ս Թովմա Արծրունի, III, Զ, էջ 256)։

30 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոցս», Թիֆլիս, 1912, էջ 117։

31 Թովմա Արծրունի, II, Զ, էջ 199։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, էջ 197։

34 Տե՛ս «Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 65, 77, 97 և այլն։

35 Տե՛ս նույն տեղում, էջ 97։

կայն եթե Աշոտ Արծրունուն արաբները զգուշացրել էին Յուսուֆի նպատակների մասին, ապա Բագարատը «ոչինչ ունէր զկարծիս զրժանաց առ Բագատրն և առ զօրս նորա», անիրազեկ էր «զպատրանս խաբէութեան նորա»[36]։ Թեև հավանաբար Աշոտը կամ իր մայրը, որ Բագարատի քույրն էր, զգուշացրել էին նրան Յուսուֆի հետին նպատակների մասին, բայց նա չի անուացել, կամ թերևս իրենք անտեղյակ են եղել Յուսուֆի և Բագարատի հարաբերությունների մասին։ Որոշակի դեր է խաղացել նաև այն պարագան, որ Յուսուֆը իր ներկայությունը չգործադրեց Արծրունիների նկատմամբ։ Բագարատը հույս ուներ, որ նույն վերաբերմունքին կարժանանա նաև ինքը։

Պարզ չէ նաև, թե խութեցիների ապստամբությանը վասպուրականցիները որևէ մասնակցություն ցույց տվե՞լ են, թե ոչ։ Բելաձորին հաղորդում է, որ ապստամբած խութեցիներին Հայաստանի «իշխաններից և մեծամեծներից յուրաքանչյուրն ուղարկեց հեծելազոր և հետիոտն զորագունդ»[37]։ Իսկ Իբն Միսքավայհը գրում է, թե Հայաստանի բոլոր իշխանները միացան ընդդեմ Յուսուֆի և դուշն կնքեցին միմյանց հետ, երդվեցին արյամբ[38]։ Նույնն է հաղորդում նաև Տաբարին։ Եթե իրոք Վասպուրականի իշխանները մասնակցած լինեին ապստամբությանը, ապա Թովմա Արծրունին առիթը բաց չէր թողնի զովերգելու իր տոհմի զործիչներին և անպայման կհիշատակեր ապստամբությանը նրանց մասնակցության մասին, մանավանդ որ հանգամանորեն նկարագրում է ոչ միայն ապստամբությունը, այլև նրա գլխավոր ուժի՝ խութեցի լեռնականների կենցաղն ու բարքերը և հիշատակում ապստամբների ձեռքով վասպուրականցի պատանդներին ազատելու փաստը[39]։

Պետք է կարծել, որ ապստամբությանը Արծրունիների չմասնակցելը ունեցել է երկու զրդապատճառ. նախ՝ Աշոտի և Յուսուֆի համաձայնությունը, որով վերջինս անցավ «խաղաղութեամբ ընդ աշխարհն Վասպուրական սակաւատոյժ վնասիւք»[40]։ Այդ համաձայնությունը միաժամանակ պահպանվեց Յուսուֆի կողմից, իսկ Աշոտ Արծրունին, որ առանց այդ էլ հակված էր խաղաղ կարգավորման, բնականաբար օրինապահ էր մնալու Յուսուֆի հանդեպ։ Զգալի դեր ունեցավ նաև այն պարագան, որ Յուսուֆը չվստահելով Վասպուրականի իշխաններին, հետը վերցրեց պատանդների՝ «ի նախարարութենէն Արծրունեաց և յազատաց նորա»[41]։ Ընդսմին, թե՛ Թովմա Արծրունու և թե՛ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, Յուսուֆին պարտություն են մատնել Սասունի լեռնականները[42], իսկ Հարևան Տարոնի բնակչությունը, որ քշվել էր դերության ու ստրկավաճառության, չի կարողացել մասնակցել շարժմանը։ Սամվել Անեցին նույնպես վկայում է, որ ապստամբել են «բնակիչք Սիմն կոչեցեալ լերինն» կամ՝ «բնակչաց Տորոս լերինն, որք Սասունք արդ անուանին»[43]։ Ուրեմն պետք է կարծել, որ արաբ մատենագիրները տուրք են

36 Թովմա Արծրունի, II, Զ, էջ 199։

37 Baladhuri, The Origins of the Islamic State, I, էջ 331։

38 «Արարատի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 77։

39 Տե՛ս Թովմա Արծրունի, II, է, էջ 202։

40 Նույն տեղում, Զ, էջ 198։

41 Նույն տեղում, էջ 199։

42 Տե՛ս նույն տեղում, էջ 201—202, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 119—120։

43 «Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւարմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 92։

տվել խալիֆայության շրջաններում տարածված այն կարծիքին, որով ապրստամբության մեղքը բարդվում էր ոչ միայն սասունցիների, այլև բովանդակ Հայաստանի վրա, որպեսզի հայ ազատանուն ասպարեզից վերացնելու համար հերյուրվեն քաղաքական ու բարոյական շարժառիթներ։ Յուսուֆին համագործակցող անձնավորությունները նպաստում էին սրան։ Թովմա Արծրունին վկայում է, որ այս անգամ ևս «յոլով այն լինէր զոր ինչ գրէին՝ զոր ոչ էր գործեալ Հայոց. և գամենայն վնասս և զգործս ապստամբութեանն ի վերայ Աշոտի կուտէին»[44]։ Դեռ ավելին. խալիֆայի խորհրդատուները հորդորում էն նրան, որպեսզի գերի վերցնի նախ և առաջ Աշոտ Արծրունուն, որից հետո մյուսները հեշտությամբ կենթարկվեն[45], մինչդեռ, ինչպես տեսանք, Աշոտը պահպանել էր Յուսուֆի հետ կնքած համաձայնության բոլոր պայմանները։

Այս վերաբերմունքը հետևանք էր այն բանի, որ Բաղարատ Բագրատունու գերեվարվելուց հետո Հարավային Հայաստանում ամենաազդեցիկ իշխանը առաջվա պես մնում էր Աշոտ Արծրունին։ Նա էր, որ իրոք կարող էր կազմակերպել ուժեղ դիմադրություն, ուստի խալիֆան և նրա մերձավորները կարծում էին, թե Աշոտի գերեվարությամբ երկրի գինական ուժերը հեշտությամբ կարող են ջլատվել։ Հենց այս նկատառումով էր, որ խալիֆան, հրավիրելով ամիրաներին, հայտարարում է, թե իբր այսքան ժամանակ ոչ ոք իրենց այսչափ վնասներ չի հասցրել, որքան Աշոտ Արծրունին, շնչելով, իհարկե, թե հատկապես ինչ վնասներ է նա հասցրել[46]։ Սա կարող էր տեղի ունեցած լինել, մանավանդ որ նախապատրաստվում էր Բուղա ալ-Քաբիր ալ-Շարաբիի (հայկական աղբյուրներում՝ Բուղա, Բուխա, Բուհա) արշավանքը Հայաստան։

Բուղա զորապետը պետք է իրագործեր այն, ինչ չկարողացան անել Ապուսեթն ու Յուսուֆը։ Խոսելով վերջինիս ծրագրերի մասին, Թովմա Արծրունին նշում է, որ Յուսուֆը «մնայր անցանել ձմերանն զի ելցէ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղաղուցանել ի գերութիւն և կացուսցէ ի վերայ աշխարհիս զործաւարս, որ բստ իւրեանց Հրամանի զկարգս աշխարհիս յօրինեսցեն, և իւրեանք հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց»[47]։ Դա այն ծրագիրն էր, որ իսկապես իրագործեց Բուղան։

Հայաստանը Բյուզանդիայից կտրելու լավագույն միջոցը խալիֆայությունը համարում էր հայ իշխաններին ասպարեզից վերացնելը։ Խալիֆան եկել էր այն համոզման, որ Հայաստանը կարելի է նվաճել միայն «սովով, սրով և գերությամբ», որից հետո գերված հայ իշխաններին պետք է փոխարինեին իր զրածները, որոնք ժառանգաբար տիրելու էին Հայաստանի գավառներին։ Այս է պատճառը, որ խալիֆան, Յուսուֆի արշավանքի ձախողումից հետո կանչելով իր զորապետներին, ասում է. «Երթք ի վերայ աշխարհին Հայոց սովով և սրով և գերութեամբ. զիշխանս և զտեարս կողմնակալս և զկուսակալս աշխարհին, զազատս և զազատորդիս փութով առ մեզ հասուսջիք կապանօք, և զուր անդէն յաշխարհին կալարուք ձեզ ընակութիւն, և ձեր լիցի երկիրն այն ի ժառանգութիւն և որդւոց ձերոց»[48]։ Այս նպատակներն իրագոր-

44 Թովմա Արծրունի, III, Ա., էջ 206։

45 Տե՛ս նույն տեղում, էջ 207։

46 Տե՛ս նույն տեղում, էջ 209։

47 Թովմա Արծրունի, II, է., էջ 261։

48 Նույն տեղում, III, Ա., էջ 210։

ծելու համար Հայաստան ուղարկվեց Բուղան՝ մոտ 200 հազարանոց զորքով, որի մեջ մտնում էին նաև թուրքական զորադնդեր։ Ուշագրավ է այն հանգամանքը, որ Բուղան առաջին հերթին մտավ Խլաթ, ապա շարժվեց դեպի Ապահունիք, իսկ զորքի մի մասը, Ժիրաքի գլխավորությամբ, ուղարկեց Վասպուրականի դեմ՝ Ռշտունիք։ Ո՞րն էր Բուղայի բուն նպատակը։ Անշուշտ, ոչ Ապահունիքը, դեպի ուր ուղղվեց նա։ Ապուսեթի և Յուսուֆի փորձը Բուղային հուշում էր, որ չպետք է վստահել հայ բնակչությանը, նույնիսկ այն դեպքում, երբ թվում է, թե նա հնազանդված է։ Յուսուֆը նույնպես իր սարշավանքի սկզբնակետն էր դարձրել Խլաթը, բայց շարաշար սխալվել էր, երբ մտել էր Մուշ՝ ձմեռելու (կամենալով ցույց տալ, թե նվաճված է Տարոնը, քանի որ վերջինիս քաղաքական կենտրոնը Մուշն էր)։ Բուղան Խլաթից ուղղվեց ոչ թե դեպի Վասպուրական կամ Սասուն և Տարոն, այլ՝ Ապահունիք, ուր մինչ այդ հաստատվել էր մահմեդական գաղթականություն։ Այստեղից նա ներխուժեց Տարոն և Սասուն, նոր ապա՝ Վասպուրական։ Առաջին հարվածը վասպուրականցիներին հասցնելու էր Ժիրաքը, իսկ Բուղան, Տարոնն ու Սասունը ասպատակելուց հետո, օգնության էր հասնելու նրան։ Ըստ երևույթին Ժիրաքը դեպի Ռշտունիք շարժվեց համեմատաբար ավելի կարճ ճանապարհով՝ Բզնունիքով և Վանա լճի հարավ-արևմտյան եզերքով։ Այսպես կարծելու համար համոզիչ կվան է Թովմա Արծրունու վկայությունը. «Քանզի,—գրում է պատմագիրը,—ընդարձակ էր պահն Հողցայ՝ փութանակի եկն եհաս Ժիրաք ի գաւառն Ռշտունեաց»[49]։ Հետևաբար, Ժիրաքի զորախումբն անցել է Հողցով (որն ընկած էր Ռշտունիքից արևմուտք՝ Թուխ գետի ձորահովտում. Կոտոմ գյուղից հարավ) և Արտամետով հասել Վան։ Մինչդեռ Բուղան, Տարոնն ու Սասունը ասպատակելուց հետո, համախմբելով Վանա լճի հյուսիս-արևմտյան շրջակայքի արաբ գաղթականության ուժերը, լճի հակադիր՝ հյուսիս-արևելյան կողմով շարժվեց դեպի Վան՝ Արծրունիների իշխանության գլխավոր քաղաքը։ «Ինքն Բուհա,— գրում է պատմագիրը,— խաղացեալ գնետ իշխանին, և ընդ նման տաճիկք Հայաստանեայց, որ բնակեալ էին ի կողմանս կողմանս աշխարհիս՝ առաջնորդէին Բուհայի ի մուտ և ելս աշխարհիս»[50]։ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու, Բուղան մտել է Տարոն և գերել Բագարատին ու նրա որդիներին, ապա ասպատակել է Սասունը, որից հետո շարժվել դեպի Վասպուրական[51]։ Ըստ Բելաձորիի, Բուղան, գալով Բիթլիս, ձերբակալեց Մուսա Իբն Զորահային (որպես Բագարատի կողմնակցի), պատերազմից խուսնեցիների դեմ, ապա շարժվեց Աղբակ՝ Աշոտ Արծրունու դեմ[52]. նույնն են գրում Իբն Միսկավայհը, Տաբարին, Յակուբին և Իբն ալ-Ասիրը։ Մինչև Բուղայի՝ Վասպուրական արշավելը, վերջինիս նախարարները հնարավորություն են ստացել հեռանալու ամուր և ապահով վայրեր։ Սակայն Վասպուրականի նախարարների ուժերն այս անգամ երկատվեցին։ Հավանորեն նաև այս ի նկատի ունի Թովմա Արծրունին, երբ գրում է, թե «ի բազումս բայրայեալ լինէր միաբանութիւն աշխարհիս», «չոյժ ուրախ առնէին զիշնամիսն ի քակել միաբանութեան իրերաց»[53]։ Սրան մեծապես նպաստում էր Բուղայի վարած քաղաքա-

49 Նույն տեղում, III, Բ, էջ 213։

50 Նույն տեղում, էջ 218։

51 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 118—119։

52 Տե՛ս «Արարացի մատենագրեր Հայաստանի մասին», էջ 65։

53 Թովմա Արծրունի, III, Ա, էջ 206։

կանությունը։ Վերջինս աշխատում էր միմյանց դեմ գրգռել ոչ միայն գոյություն ունեցող նախարարական տներին, այլև նրանց, ովքեր առաջներում ունեցել էին իրենց ազգատոհմը, զորքը և նախարարական այլ իրավունքները։ Նա իր մոտ էր հրավիրում պատմական իրադարձությունների բերումով իրենց տիրույթներից զրկված տոհմերի շառավիղներին և խոստանում, որ կվերականգնի նրանց նախարարական իրավունքները, պայմանով, որ պայքարեն իրենց շնորհազրկած տոհմի դեմ և համագործակցեն իր հետ[54]։ Զորեղ տոհմերին (ամենից առաջ Արծրունիներին) թուլացնելու այս քաղաքականությունը որոշ հաջողություն ունեցավ. Բուղան կարողացավ իր կողմը գրավել Բագրատունի մի քանի գործիչների, ամենից առաջ՝ Մոկքի տերերին, թերևս գրգռելով նրանց և Արծրունիների միջև եղած վեճերը։ Ինչպես կտեսնենք ստորև, նրան հաջողվեց նաև պառակտում մտցնել Աշոտ Արծրունու և Վասպուրականի որոշ նախարարների միջև։

Երբ Բուղան շարժվեց Վասպուրական, Աշոտ Արծրունին, Վահան և Մուշեղ Արծրունիների, Մուշեղ Վահևունու (որ ուներ տանուտիրական պատիվ), Վահրամ սեպուհի և ուրիշների հետ ազատների գնդով ամրացավ Վասպուրականում, Թոռնավան գավառի Նկան ամրոցում։ Այնուհետև Նկանի մոտակա ձորում իր զորագնդով ամրացավ նաև Վահան Ամատունին, հաշվի առնելով այն, որ Նկանում էր «տէրն իւրեանց», այսինքն՝ Աշոտ Արծրունին[55]։ Այս միջոցառումներն ունեին զուտ պաշտպանական նպատակներ։ Բայց հայ իշխանները միաժամանակ ջանում էին դրական ելք գտնել, «խնդրէին տեսանել, թէ որպէս կարասցեն գտանել զելս իրաց վտանգին ի վերայ հասանելոյ»[56]։ Բուղայի զորքի մի մասը պաշարեց Նկանը, իսկ նրա մեծ մասը բանակեց Ղոկորմատ ավանում (որը հեռու չպետք է լիներ Նկանից), «ունելով ընդ ինքեան զբազմութիւն զնդոյն կուտեալ իբրև զհող»։ Հավանաբար սկզբում ամրոցի դեմ ճնշումն ուժեղ չի եղել, քանի որ, ինչպես տեսանք, հիմնական զորքը դեռ չէր պաշարել այն։ Բայց ամրոցի դիմադրությունը հավանաբար ստիպել է, որպեսզի Բուղան, որ անձամբ էր գլխավորում պաշարումը, օժանդակ զորք տեղափոխի այնտեղ, գործադրի քարաձիգ և նույնիսկ հրձիգ մեքենաներ։ Պաշարված իշխանների մեծ մասը, անիմաստ համարելով դիմադրությունը, դավադրություն նյութեց Աշոտի դեմ, հույս ունենալով անպատիժ իշխել իրենց տիրույթներում։ Բուղային ըստ երևույթին հաջողվել է իշխաններին խաբել, թե իբր ամբողջ Հայաստանը նվաճված է և դիմադրելն անիմաստ։ Այս երևում է նրանից, որ իշխանները Բուղային ուղարկած հրովարտակում գրում են, որ Բուղան հնազանդեցրել է ողջ Հայաստանը, «զիշխանս և զտեարս, զկողմնակալս և զկուսակալս, զքաղաքապետս և զմարզպետս բոլոր Հայաստանեայցս»[57]։ Իշխանները տեղյակ էին դրսում կատարված ոչ բոլոր անցուդարձերին, որոշ բան գիտեին Վասպուրականի զորքի մեծ մասի ճակատագրի մասին, բայց որովհետև այս զորքը հեռացել էր Վասպուրականից, ուստի կարծում էին, թե ամեն ինչ վերջացած է, որ իբր զորքը հեռա-

[54] Տե՛ս նույն տեղում, III, Թ, էջ 282—283։

[55] Տե՛ս նույն տեղում, III, Բ, էջ 219։ Վահան Ամատունու այս զորաջոկատի հետագա ճակատագիրը մնում է անհայտ։ Ինչևէ, Վահանը չի հիշվում այլևս։ Արյան լճի մարտում հիշվում են Մուշեղ, Ասիթ և Սահակ Ամատունիները (նույն տեղում, III, Դ, էջ 243)։

[56] Թովմա Արծրունի, III, Բ, էջ 219։

[57] Նույն տեղում, էջ 223։

ցել է Ատրպատականի կողմերը, մինչդեռ դուրս գալով Վասպուրականից, գորքերը, գաղթականների ստվար խմբով, կենտրոնացել էին Կորճայք նահանգի Որսիրանք գավառում։

Նկանում վաստորեն կատարվեց հեղաշրջում, որի հետևանքով նախարարներն այլևս չէին ճանաչում Աշոտ Արծրունու տերունական իրավունքները։ «Ի ձեռս մեր է հոգաբարձութիւն աշխարհիս»,— հայտնում են նրանք Բուղային[58]։ Սա հետևանք էր այն փաստի, որ Աշոտը կամենում էր շարունակել դիմադրությունը, մինչդեռ նրա հետ եղած նախարարները որոշեցին զոհել նրան, միայն թե Բուղան ճանաչի իրենց իրավունքները։ «Մեծ իշխան տանն Արծրունեաց՝ Աշոտ,— գրում է Հովհաննես Դրասխանակերտցին,— թէպէտև հանդերձէր զինքն իւրայօքն վառելովք մարտ ընդ բռնադատին Բուխայի դնել, սակայն նախարարքն իւր ոչ գտանէին նմա համամիտք ի գործ պատերազմի»[59]։ Անշուշտ սակավաթիվ իշխանների այսօրինակ կողմնորոշումը վճռականորեն չէր կարող ազդել Վասպուրականի ընդհանուր ճակատագրի վրա, քանի որ նրա ազատանու մեծ մասը իրենց գորքերով Աշոտ Արծրունու եղբոր՝ Գուրգենի հետ հակված էին դիմադրելու թշնամուն։ Հարավային Հայաստանի քաղաքական միասնության վրա բացասաբար ազդեց նաև այն, որ Մոկաց նախարար Սմբատ Բագրատունին հակվեց Բուղայի կողմը (թեև դրանով Մոկքի բնակչությունը կերծ մնաց ասպատակումներից)։ Ճիշտ է, Սմբատին հաջողվեց համոզել Բուղային և ազատել ամբ Վասպուրականի գերիներին, բայց նախարարներից ոչ ոքի նա չի ազատել (թեև Թովմա Արծրունին գրում է, թե իբր կամեցել է ազատել Աշոտ Արծրունուն)[60]։ Այսպես, Բագրատունիներին հաջողվում է շահել խալիֆայության վստահությունը, մինչդեռ Արծրունիները այն ձևոք էին բերելու միայն զինված պայքարի և մեծ զոհողությունների գնով։ Աշոտ Արծրունին, իր որդի Դերենիկը և ուրիշներ գերության տարվեցին և նետվեցին Սամառայի բանտը։

Նկանի անկումից հետո Վասպուրականի դիմադրական ուժերը լրիվ չչլատվեցին, ուստի խալիֆայության տիրապետությունն այնտեղ չէր կարող հաստատուն լինել։ Ճիշտ է, այդ ուժերը դուրս էին եկել Վասպուրականից, սակայն հարմար պահին նրանք կվերադառնային այնտեղ։ Գուրգեն Արծրունին, որի հետ էին «բազմութիւն ազատաց և մեծամեծացն Արծրունեաց նախարարութեանց և ամենայն զօրաց նոցա», բանակեց Որսիրանք գավառում, Թով գյուղի մոտ, «ի հովիտս նորա, որ կոչի Արեան լիճ», ուր ապավինել էին Աղբակի, Ակեի, Ջորհավանի, Աղդզ լեռնակողմերի (Անձևացյաց գավառի), Առնոստն գավառի, Ջողա լեռան մատույցներից փախած գաղթականները[61]։

Եթե Նկանում Վասպուրականի գորքը սակավաթիվ էր, և նախարարները հակված էին հանձնվելու թշնամուն, ապա հակառակն էր պատկերը «Արյան լճում», ուր և՛ վասպուրականցիների գորքն էր մեծաթիվ, և՛ նախարարներն էին հակված պատերազմելու։ Նրանք նույնիսկ ետ պահեցին Բուղայի մոտ մնկնել ցանկացող Գուրգենին։ Այստեղ բացի Արծրունիների տարբեր ճյուղերի ներկայացուցիչներից, հավաքվել էին նաև Գնունիները, Գաղրիկյաննե-

58 Նույն տեղում, էջ 224։

59 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 119—120։

60 Թովմա Արծրունի, III, Բ, էջ 229—230։

61 Տե՛ս նույն տեղում, III, Դ, էջ 237։

ը, Ամատունիները, Վարաժնունիները, Ընտրունիները, Ակևացիները, Վահևունիները, Անձևացիները[62]։ *Չկային Վասպուրականի միայն այն տոհմերը, որոնք Արծրունիներին էին հարել այլ նահանգներից (Հավնունիներ, Քաջբերունիներ, Գաբեղյան, Հարքացի և Մուրացան)։ Չի հիշվում նաև Բագրատունի իշխանը, որը, թերևս, հետևել էր Մոկաց Սմբատ Բագրատունու օրինակին, իրախուսվելով Բուղայի խոստումներով։ Բուղային հաջողվել էր Վասպուրականի զորքի դեմ հանել նաև Պարսկահայքի, Ատրպատականի, նույնիսկ Տփղիսի ամիրաների զորքերը։ Սրանց հետ հիշվում է նաև ոմն Աշիխ, «որ եկեալ էր ընդ զօրսն արքունի ի Գարդայ Պարսից»*[63], *բայց գերազասեց հեռու մնալ մարտից։ Չնայած տարած հաղթությանը, Գուրգենը չօգտվեց նրա պտուղներից. «Արյան լճի» մարտից հետո Ատրպատականի Համդո ամիրային Բուղան հրամայեց գերի վերցնել Գուրգենին։ Համդո ամիրան, որի տրամադրության տակ էր դրվել 10 հազարանոց թուրքական զորաբանակ, գերազասեց խաբեությամբ Գուրգենին գերել։ Վերջինս, որ հակված էր խաղաղության, հավատ ընծայեց հարևան երկրի տիրոջ դրավոր հրավերին (ամիրան խոստանում էր Գուրգենին թողնել Վասպուրականի իշխան) և մեկնեց նրա մոտ, բայց արժանացավ եղբոր ճակատագրին։*

ПОЛИТИЧЕСКАЯ ОРИЕНТАЦИЯ ВАСПУРАКАНСКОГО КНЯЖЕСТВА В СЕРЕДИНЕ IX ВЕКА

В. М. ВАРДАНЯН

(Резюме)

В условиях господства Аббасидского халифата Васпураканское княжество сохраняло свое существование. Халиф направил в Армению войска, которые в первую очередь напали на южную Армению, в том числе на Васпуракан, имея перед собой цель ликвидировать автономию армянских князей. Захватчикам дали отпор в основном силы Васпуракана и Тарона, между которыми существовал договор о взаимной помощи. Вокруг васпураканского князя сплотились войска 19 ветвей княжеского рода Арцрунидов, а также другие княжества Васпуракана и соседних провинций.

---

62 *Տե՛ս* Թովմա Արծրունի, III, Դ, *էջ 243։*

63 *Տե՛ս նույն տեղում, էջ 245։ «Գարդայ Պարսից» վայրը հավանաբար նույնական է Իրանի Գարդիզ քաղաքի հետ, որը գտնվում էր, ըստ Վ. Բարտոլդի, Ղաղնայի մոտերքում (տե՛ս* В. Бартольд, Историко-географический обзор Ирана, Сочинения, т. VII, М., 1971, *էջ 93։*